

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առևտուհան 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիգուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՊՈՒԹԻՒՆ

Կանանց բժշկական կրթութիւն.—Ներքին Տե-
ստիութիւնը Ձրի ճաշարանների առիթով Կոնցրես-
տում, Կարճեալ մուսուլման մեծ օգուտի մասին,
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ, Եգիպ-
տական գործերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՎ հաւատաց.

ԿԱՆԱՆՑ ԲՈՎՆԱԿԱՆ ԿՐՈՒԹԻՒՆ

Մեծ յոյսերով, մեծ ոգևորութեամբ, 1872
թվականին, Պետերբուրգում բացվեցին կա-
նանց բժշկական բարձրագոյն դա-
սարն թաղանթները.

Կես չէր վերջացած այն հին վէճը, թէ
արդեօք կանայք ընդունակ են բարձրագոյն
լուրջ կրթութիւնը իւրացնելու, գիտու-
թիւններ ուսումնասիրելու թէ ոչ: Այն
հարցուազիւտ կանանց վրա, որոնք արտա-
սահմանում անցել էին համայնարանական
գիտութիւնների բարձրագոյն աշոյղ կեր-
պով, դեռ նայում էին շատերը իբրև բա-
ցառու թիւններ իր վրա: Առանձին ան-
հատներ կանանց մէջ, առում էին նրանք,
կարող են օժտված լինել բացառիկ ընդու-
նակութիւններով, մինչդեռ երբ բացվում է
մի դպրոց, մի դասընթացը յատկապէս կա-
նանց համար, պէտք է յոյս ունենայ, որ
հարկւրաւոր անձինք պէտք է նրան յաճա-
քեն, հարկւրաւոր և հաղթարար անձինք
պէտք է ընդունակ լինեն մտածողութեան,
գիտական գործունէութեան համար: Ուստի
բժշկական դասընթացների վրա շատերը
նայում էին դեռ կասկածով, իբրև մի փոր-
ձի վրա: Բայց փոքր չէր և այն անձինք
թիւր, որոնք հաւատում էին կանանց բար-
ձր կրթութեան աշոյղութեան և որոնք
չէին կասկածում, թէ կանայք կարողա-
նեն նրանց վրա դրած յոյսերը:

Պետերբուրգը դիմեցին կանայք Ռուսաս-
տանի ամեն տեղերից, և նոյն իսկ Կովկասից:
Վաղուց սպասված, վաղուց ցանկացած ա-

նաջարկութիւնը իրագործում ստացաւ:
Անցան տարիներ և կանայք ահա պատ-
րաստ են, իբրև բժիշկներ, կանքի մէջ
գործելու, իրանց գիտութիւնը, իրանց բը-
ժշկական հմտութիւնը գործադրելու: Յըր-
ւեցին կանայք զաւառական քաղաքները և
նոյն իսկ զԻւղերը: Շատ տեղ նրանց օգնու-
թեան եկան գեմատիօնները, որոնք հրաւի-
րեցին նրանց զաւառական բժիշկների պաշ-
տօնով:

Տան տարվայ ընթացքում, այն է 1872-ից
սկսած մինչև 1882 թվականը, քանի գո-
յութիւն ունեին կանանց բժշկական կուր-
սերը, հազարից աւելի ուսանող-հիւնը
գնացին սովորելու բժշկական գիտութիւնը և
աւելի քան վեց հարիւր անձինք
ստացան աւարտման վկայական-
ներ:

Փորձի համար այդ թիւը շատ մեծ
թիւ է և նրա տուած հետեւները ոչ
միայն ուսանելի, այլ և վճարողական:

Բժիշկ-կանայք փայլուն կերպով արդա-
բացրին նրանց վրա դրած յոյսերը: Իբրև
բարեխիղճ բժիշկներ, իբրև տոկոս զաւա-
ռական գործիչներ, իբրև հիւանդ խնամող-
ներ նրանք բոլորովին փոխարինեցին տղա-
մարդ բժիշկներին: Ճիշդ է, նրանք գիտ-
ական աչքի ընկնող հետազոտութիւններ
չը տուին, գիտական գործունէութեան
նոր ծաւալներ չը բացեցին, բայց և չէր
կարելի այդ պահանջը նրանցից անպատ-
ճառ. նրանք բաւարար էին, իբրև ժողովր-
դական բժիշկներ, իբրև առողջապահու-
թեան հսկողներ, իբրև հիւանդութիւննե-
րի դէմ մաքառողներ: Թէ պատերազմի
դաշտի շարժական հիւանդանոցներում,
թէ ժողովրդական աղէտների ժամանակ,
թէ սովորական և խօտերայի ժամանակ
կին բժիշկները ցոյց տուին օրինակելի գոր-
ծունէութիւն, հազուադեպ անձուկրու-
թիւն:

Հասարակութիւնը գնահատեց այդ գոր-
ծունէութիւնը պահպան ձևերով յայտնելով
իր համակրութիւնը: Իւրաքանչիւր ժողովուր-

դը, նրա մանաւանդ կանանց մասը, գործ-
նականապէս տեսնում էր կին բժիշկնե-
րի գործունէութեան օգտակարութիւնը, մի
քանի տեղերից դիմեց գեմատիօն վարչու-
թիւններին՝ յայտնելով իր գոհունակու-
թիւնը կին բժիշկներին:

Երկու մեծ գիտնական ժողովներ, որ տե-
ղի ունեցան այս ձևով, այն է բժիշկների
հիւանդներ ժողովը (Պիրոգովի յիշատակին
նուիրված) և բնագէտների ինստիտուտի ժողո-
վը, որոնք կարող են համարվել ռուս-գիտ-
նական աշխարհի հայեացքների արտայայ-
տութիւնը, վճիռներ կայացրին դիմել ժո-
ղովրդական լուսաւորութեան մինիստրու-
թեան և խնդրել, որ կանանց բժշկական
բարձրագոյն կրթութիւնը հաստատ հիմքե-
րի վրա դրվի և ըստ կարելոյն շուտ իրա-
գործվի:

Կատարութիւնը վաղուց յայտնել է իր
համակրութիւնը կանանց բժշկական կրթու-
թեան գործին և դասընթացների բացումը
յիտաճգում է միայն նիւթական, գրամական
միջոցների պակասութեան պատճառով: Ռուս
հասարակութիւնից մի քանի ունեւոր ան-
ձինք նուիրել են այդ գործին մեծ գումար-
ներ և շատերը յայտնել են պատրաստակա-
նութիւն ամեն կերպ օգնութիւն մատու-
ցանել, երբ գործը կը մտնէր իր իրագործ-
վելուն:

Հինգերորդ բժշկական ժողովի վճիռը
այս օրերս մատուցել է ժողովրդական
լուսաւորութեան մինիստրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻԹԻՒՆ

ՁՐԻ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԻՌՈՎ

Ինչպէս յայտնի է, կարօտակներն օգնելու
համար Ալեքսանդրօպօլում բացված է ձրի-էթա-
նային ճաշարան, և մտադրութիւն կայ բնաւոր
ճաշարաններ կարգում, և նոյն իսկ կարգաւանդում:
Մենք միանգամայն համակրում ենք այդ հիմ-
նարկութիւններին, որոնք աղէտների ժամանակ

մեծ նպաստ են ցոյց տալիս աղքատ դասակար-
գին, ինչպէս ցոյց տուցին խօրեքալի ժամանակ,
ինչպէս ցոյց են տալիս և կը տան անկասկած և
այժմ:

Համակրելով հանդերձ այդ հիմնարկութիւննե-
րին, մենք հարկաւոր ենք համարում ուշք դարձ-
նել մի հանգամանքի վրա.—չը լինի թէ այդ
ձրի-ճաշարանները կանեն բոլոր նիւթական մի-
ջոցները, և մտադրութեան տան այն բազմաթիւ
կարօտակներին, որոնք գտնվում են գիւղերում,
և ուրեմն անկարող են օգտվել մեծ քաղաքնե-
րում բացված ճաշարաններից:

Թէ բացված և թէ բացվելի ճաշարանները կա-
րող են կրանել նուիրատուութիւնների մեծ մասը,
մինչդեռ բացի այդ քաղաքներում եղած կարօ-
տակներից և աղքատներից, կարսի, կարդուանի,
Նոր-Բայազետի և նոյն իսկ Ալեքսանդրօպօլի
չը վակայ տանակ գիւղերում ահագին քանա-
կութիւն են կազմում կարօտ, աղքատ և օգնու-
թիւն սպասող ընտանիքներ, զիւրացիներ:

Եւ ահա այդ պատճառով, առանց մտնելու
մանրամասնութիւնների մէջ, մենք ցանկանում
ենք, որ այն անձինք և հիմնարկութիւնները, ո-
րոնք ստանում են հասարակական նուիրատու-
թիւնները և գործադրում նրանց, աշխատեն, որ
այդ գումարները հաւասար կերպով բաժանվեն թէ
քաղաքների և թէ գիւղերի աղքատների մէջ,
և քաղաքներում կնտրօնացնելով բարեգործական
ձեռնարկութիւնները, գիւղերը չը մնան գոբը և
անօգնական:

ԿՈՆՑԷՔՏ—ՄՕՆՍԻՐ

Ապրիլի 7-ին, ցերեկում, Տրուֆֆիի և Լեստոլիւ-
չիի ղեկավարութեամբ կայացած մտնար-կոնցրե-
տը գրաւեց ահագին բազմութիւն ունեւորներին:
Կոնցրետի տիպարը շատ դրամիչ էր և իր տեսա-
կի մէջ Թիֆլիսում միակը: Կատարվեցին երաժշ-
տական կտորներ մի քանի տեսակ. 1) օպերային
50 հոգուց բաղկացած օրկեստրը, դիմուորական
երկու երաժշտական խմբերի հետ. 2) պ. Շալաւա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՎ ՀԱՒԱՏԱՑ

«Արտատ» ամսագիրը մարտի համարում տա-
լիս է ընթերցող հայ հասարակութեան մի գիւ-
ղական քահանայի քարոզ, որի բովանդակութիւնն
արժանի է ամեն մի հայի խորին ուշադրութեան
իր յօդաբան խնդրի պատճառով.—այդ ժողովու-
րդին ունեւել և արժանաւոր քահանայներ տարու
ժամանակակից կենսական խնդիրն է:

Բար. Արշակ երէցը ընդունելով քահանայի քա-
րոզական պարօքը և իրաւունքը և խոստովա-
նելով թէ քարոզիւտ համար էլ քահանայն պէտք
է ունեւել լինի, այն ինչ այդ սուր պաշտօնը զը-
րուել և գրաւում են մեր եկեղեցիներում՝ ար-
դէտները և անուանքը՝ ըստ երեւութի կամ
նում է հոգևոր վարչութիւնը մի կերպ արարաց-
րած լինել ազգի առաջ արդիւնի ձեռնարկութիւն-
ներ թող տարու համար: Առաջինը ըստ երե-
ւութի, ըստ որում արժ. երէցը՝ որչ. կերպով
չէ բացատրում իր միտքը, պարզ չէ ասում այն,
ինչ որ ընթերցողն ինքը եզրակացնում է:

Ժողովուրդը, գոյում է տէր Արշակը, այս դա-
տասան ձևը կը թողում. յանցանքն ում է, երբ
գիւղական քահանայներ աղէտ և սնրմատա են.
յանցանք եպիսկոպոսին է, որ կը ձեռնադրէ,
թէ Էլմիթայայ բարձր Հոգևոր Ատենին է, որ
կը թողարկէ: Չը ժողովուրդին է, որ կը թախանձէ,
կը պահանջէ, համախոսական ժողովներ կը կազ-
մէ, հարկուտ որ ստորագրութիւններ թափում են

խնդրազրին վրա. վառերական կնքով էլ դրոշմե-
րով:

Նախ քան սպացուցանելը թէ որչափ սխալ է
ժողովրդին մասնակից համարել աղէտների ձեռ-
նարկութեան մեղքին՝ կարեւոր ենք համարում
մի համառօտ հայեացք ձգել անցյալի վրա:
Սովորաբար՝ երբ հասարակական բնուորութիւն
կրող մի խնդրի է յարուցվում, յաջողութիւնը կախ-
ված է լինում համակրութեան այն չափից, որով
ինքը հասարակութիւնն է վերաբերում դէպի նա:
Որքան էլ օգտակար և ողջիւտ լինի մի պահանջ,
որքան էլ իրանց կրթութեամբ, խելքով և զգաց-
մունքով բարձր կանգնած լինեն նրա յարուցա-
նողները, այսու ամենայնիւ նրանց աղաղակը փ-
մնայ ձայն լարբաւոյ յանապատի, եթէ ինքը ժո-
ղովուրդը՝ զեռ. չէ զգում պահանջածի կարեւոր-
ութիւնը:

Արժանաւոր, բանիւրու քահանայներ ունեւա-
լու պահանջը յարուցվել է Ռուսաստան մէջ,
եթէ շատ հեռու չեղած, դեռն դարուս երկրորդ
կիսի սկզբում: 60—61 թվականին Մ. Նայբան
գեանցն էր դրում Տ. Մատթէոս կաթողիկոսին.
«Առ մեզ առ ամենայն կացութիւն անպիտան
պիտանի համարի առ հոգևորականութիւնն»: Ճիշդ
նոյն ժամանակին էր, որ աղբիւս ներկայ վեհապետ.
Հայրապետը չը թած լինելով իբրև վարդապետ
Կովկասի հայոց մէջ և հանդիպած Մ. եպիսկոպո-
սի Տաթևի վանքում ձեռնադրած քահանայներին
իր «Երթիւ Վասպուրականին» թերթում լոյս ըն-
ծայեց մի յօդուած իբրև բողոք անարժանների
ձեռնարկութեան դէմ: Արշակն և ուրիշ մի քա-
նիւնները: Սակայն անհատների ձայները, բողոք-
ները ցանկալի արդիւնքը չէին տալիս, ըստ ո-

րում ժողովուրդն անտարբեր էր:

Անցում է 15—20 տարի: Մի կողմից մամուլը,
միւս կողմից մտաւոր գարգացման և յառաջադի-
մութեան հայ հասարակութեան զանազան դասա-
կարգերի մէջ բարձր ծաւալ աւելնլ՝ մասնաւոր-
ների բողոքն ու պահանջը դարձնում են ժողովր-
դական: Այս ջրանին նպաստում են մասնաւոր
70—80 թվականների թէ վիճակներում և թէ ս.
Էլմիթայում կատարված ձեռնարկութիւնները:
Ժողովուրդը տեսնում է, թէ որպիսի այլանդակ
չափեր է աւելնլ աղէտ և անբարոյական ան-
ձինքների ձեռնարկութիւնը. և նրա դարբնին այն-
քան բուռն և խիստ է լինում, որքան մեծ է լի-
նում և գայթակղելի մի կողմից անուս, անարժան
հոլիւների գոռոզազուղ երկրի եկեղեցիներում *)
և միւս կողմից՝ այդպիսի ձեռնարկութիւններին
տեղի տուող քառամեկի շարժառիթը—սիմոնա-
կանութիւնը **): Հոգևոր իշխանութիւնը նկա-

րում էր և մամուլի մէջ շարունակ կարողում աղ-
գի այդ զայրոյթի և անբարոյականութեան արտա-
յայտութիւնները: Տ. Գեորգ. Գ. կաթողիկոսի վեր-
ջին տարիներում՝ տիրացուներն այլ ևս կրնանում
կամ վաղարկապատում՝ չէին ձեռնարկում, այլ
Սևանի, Գեղարդի և այլ վանքերում, ուր ժողո-
վուրդը չէր կարող ներկայ լինել և տեսնել թէ ե-
կեղեցու սքանչելի խորհուրդը որպիսի մարդկանց
վրա է կատարվում:
Որչափ էլ եկեղեցու ներկայացուցիչները յօժա-
րակամ չը կամենային ուշադրութեան աւանել ժո-
ղովրդի պահանջը, որքան էլ խոյս տային նրա
ձայնը լսելուց՝ այսու ամենայնիւ բողոքովն ար-
համարել անցնել չէին կարող, և այդ ճնշման
հետեանքն այն է լինում, որ ժամանակ առ ժա-
մանակ ժողովուրդը գոհացնելու, կամ աւելի ճիշդ
կը լինի ասել՝ նոյն ընթացքը արտաքայար-
գար ձևակերպութեամբ շարունակելու փորձեր են
լինում:
Հանուցեալ Գեորգ կաթողիկոսը, որ 1868 թվին
սիմոնի տուած կնքագիւով ցառ ի սիրտ ծանուցա-
նում էր թէ «Յակն արկեալ զբարոյական հանգա-
մանս հոգևորական դասուց, յորոց առաւել կարին
բարոյական կենդանութիւն ազգին մերոյ և զարգա-
ցումն նորս ի կրնական Աստուածաշուքութիւ-
նրս... տեսաք անեալ յայն բարձր և երկնաւոր սուրբ

1882 թվին գրած պայմանագրով մի մուրակ, որ
գրված և ստորագրած է հանուցեալ Ստեփան
Գեղարդեանցի ձեռքով: Բովանդակութիւնն է.
«Տալիս եմ այս ձեռագիրը վարդապետական
Ա...ին առ այն, որ ստացայ նորանից... տիրա-
ցուների ձեռնարկութեան համար հինգ հազար
րուբլի, եթէ նորանք չը ձեռնարկուն, պար-
տաւոր եմ ինչեւալ գումարը վերադարձնել»:

*) 1889 թ. սիմոնի ուղղած իմ մի ընդարձակ
յայտարարութեան մէջ խոսելով այդ ժամանակում
կատարված քահանայական ձեռնարկութիւնների
մասին՝ մի ծանօթութեան մէջ ասել եմ. «Ոչ իշխան
և ոչ ցանկամ յիւրաւանս անպարտ պատմաբանի
միջմտակ վասն ցուցանելոյ առգն, թէ որչափ
բարձրացան տրտունք և անբարոյականութիւնը յազ-
գի վասն ձեռնարկութեան անպատրաստ անկիրթ
քահանայից անհատար բազմութեամբ ի 1868—
1882 ամսն. և որչափ գործ բարոյական և մտա-
ւոր յառաջադիմութեան ժողովրդեան պետա-
դարձ կալու ընթացս ի վնաս և ի հարուած ե-
կեղեցույ յերեսաց այդպիսեաց քահանայից, գոր-
րուժել և ոչ հարիւր ամբ դորոնցն»: Այս յայ-
տարարութիւնն այլ կարեւոր յանուցումների հետ
մտակ ժամանակում կը հրատարակենք առանձին
գրքով:

**) Այս օրերս վաղարկապատում յայտնվեց

պին (բաս) սօր և 70 հոգի երգեցիկ խումբը 3) 24 պիանիստներ 12 դաշնամուրներ վրա և 4) օրկէստր, երկու զինուորական երաժշտական խմբեր, երգեցիկ խումբը և պ. Ծալեապին միասին: Բացի երկու պիանիստերէ, բոլոր կտորները կառավարում էր հմուտ և տաղանդաւոր երաժշտագետ պ. Տրուֆֆին, որի փայտի շարժման տակ խմբերը պիանիստը կառավարեց պ. Վեստֆելին: Պարտնը առաջնակարգ պիանիստ է Քիֆլիսով: Երկրորդ օրկէստրի կը լինէր թէ իր համար, թէ մեզ՝ երաժիշտներին և թէ հասարակութեան համար, եթէ նա չը չեղէր՝ երաժշտական մասնագիտութեան ճանապարհից և մնար միմիայն առաջնակարգ պիանիստ և յանձն չառնէր դիրիճօրի դերը կատարելը, որը խիստ նեղ գրութեան մէջ դրեց, իրեն նետ միասին, և մեզ բոլորին: Նա կառավարեց Սեն-Սանտի «Пляска смерти» և Բէթօլէի «Этюд» պիանիստը: Այս երկու պիանիստի կառավարող փայտի բոլոր շարժումները և նշանները այնքան անյարմար էր կատարում, որ երաժիշտները վախում էին նուազելու, որ մի գուցէ սխալ տակտով նուազեն: Առանց բացառութեան, բոլոր նշանները ոչ ուր էր տակն. շատ անգամ էլ պատահում էր, որ խումբը արդէն կատարել է այն, ինչ որ նա դեռ նոր էր ցոյց տալիս կատարելու: Նա դիրիճօր չէ և չէ էլ կարող լինել այսուհետեւ, որովհետև նա իր մասնագիտութեան ճիւղին ունի և երկրորդ՝ նա իր տարիքը արդէն առել է:

12 պիանիստների ձայները դուրս էին գալիս իրան երկու շատ հին և ջանքախնայ պիանիստներից, և պատճառը շատ պարզ է.—ինչպէս կարելի է ցերեկում պիանիստ վրա անել: Երգեցիկ խումբը անպատրաստ էր ամեն կողմից, թէ ձայնի, թէ բախումների և թէ կատարելու կողմից:

Հասարակութիւնը դո՛ւ մնաց միմիայն պ. Ծալեապինի երգից և պ. Տրուֆֆինի կառավարութեամբ երեք օրկէստրի միասին կատարած կտորներից:

Առհասարակ կօնցերտը էսթետիկական նշանակութիւն չունեցաւ, այլ մի մեծ կամ վիթխարի համբողջ էր: Ի վերջոյ առանձին յայտարարութեան երգեցիկ «Боже Царя храни» օրհներգը, որին մասնակցում էին բոլոր նուազողները և երգողները, պ. Տրուֆֆինի կառավարութեամբ, որը հասարակութեան խնդիրը կրկնեց:

Երաժիշտ

ԴԱՐՁՆԱԼ ՄՈՒՍՅՎԱԾ ՄԵՐ ՕԳՈՒՏԻ ՄԱՍԻՆ

«Մշակի» № 18-ի մէջ մենք խօսել էինք այս օգուտի մասին: Մեր խօսքը արձագանք գտաւ. «Մշակի» անցեալ համարում տպվեց Ղարաբաղի կոչումն (քահանայութեան) գտնելու, դանաթման և զարատաւոր իսկ... և ի տեղիս տեղիս նշմարեցք զթիւնոցն անցեալ զանցեալ քան զպահն. երեք տարուց յետոյ 1872 թ. ին յունվարի 27-ին տուած մի կնիքակալով ոչ թէ այդ անցեալ զանցեալ թիւր կարծելու պատուէր է տալիս, մինչև որ իր հինգում ձեւմարան և չորս թեմական դպրոցներն ազգին տան ուսեալ եկեղեցականներ, այլ գտնելով՝ որ «Առաջնորդը վիճակաց... մանաւանդ Նրեանայ վիճակի, յակամայից ստիպեալ ի կարողութեան քահանայի, առաջի առնեն զձեռնադրելի անձինս ի Սինօղէ առ ի ընդ գոգեւոր պէտս ժողովրդեան, բայց տեսնելով մեր, զի փոխանակ ի յառաջադիւթութիւն անը փութացուցանելով զժողովուրդն քարոյական կրթութեամբ, որ ըստ օրէ տղիտութեան տան պատճառս, դանաթման և զտնտարածեանադրելով ի քահանայ՝ պատուիրում է, գիտե՞ք ինչ տիրացուներն ուղարկել վանքերը, որ սովորեն քահանայական գիտելիք, չը նայած՝ որ ինքը կնիքակ տուողը շատ լաւ գիտէր, թէ մեր վանքերը քարոյական իրաւունք անկաման են հասել և նրանցում նստող վանաւարների համար ուսումն և գիտութիւն վաղուց դարձել են շաւղութեան առարկաներ: Բայց և այնպէս տիրացուները դալիս էին վանական դպրոցների վկայականները՝ ձեռքերին և ձեռնադրում էին Մի նմուշ տալու համար այդ վանական վկայականներից, վերջնենք մի օրինակ: Անցեալ տարի Նրեանի կօնսիտօրիան միջնորդում է ձեռնադրել քահանայ Ֆարուս գիւղի մի տիրացուն, որին սինօղն ինքն հարցաքննելով և տգէտ գտնելով՝ մերժում է: Թեմ. իշխանութիւնը տիրացունն ուղարկում է Սեանայ վանքը կրթվելու և ուսանելու. և անա

կօնսիտօրիայի մի գրութիւնը: Մենք պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել Ղարաբաղի կօնսիտօրիային այն պատճառով որ նա պաշտօնապէս հաստատեց մեր վերոյիշեալ յօդուածի միտքը: Եւ այդ հաստատութիւնն ունի այնքան պերճախօս փաստեր, որ մենք չենք կարող չը յիշատակել դրանցից մի քանիսը:

Մենք ասել էինք, որ վանքական կառուածները արդիւնք չեն տուել: Կօնսիտօրիան հազարում է, որ երեսուն տարւոյ ընթացքում կառուածների գուտ արդիւնքը եղել է 316 ր. 40 կօպ., ուրեմն տարին միջին թուով 10 ր. 54²/₃ կօպ.: Թող ներվի մեզ ասել, որ հէնց այս կատարեալ անակութիւնն էինք մենք արձանագրել: Այլ մի ժամանակ մենք ոչ մի կասկած չենք ունեցել, որ թէ կօնսիտօրիայի և թէ հոգաբարձութեան ժապաւինեալ մտտանները կարող են ունենալ իրանց մէջ պակասութիւններ, ուր մնաց զեղծումներ: Այլ այդ գրքերի կանօնաւորութիւնը բոլորովին անվիճելի է: Բայց չէ որ այդ գրքերից քիչ հետո ուրիշ աշխարհ էլ կայ: Մենք երբեք չենք խօսել ժապաւիններով ամբարցած գրքերի մասին. մեր խօսքը եղել է ընդհանուր սխառեմայի, անտեսաւարտութեան եղանակի մասին. և մեր խօսքը ասելի քան պարզ է. 10 ր. 54²/₃ կօպէկ տասնեակ հազար գեներալներն ունեցող կառուածներից—էլ ինչ բացատրութիւն է հարկաւոր:

Կօնսիտօրիան ինքն է հաստատում, որ «որոք և այրեաց գանձարանից» 400 րուբլի է պարտք վերցրած: Շատ ցաւում ենք, որ կօնսիտօրիան չէ յիշատակել, թէ ինչ հանգամանքների մէջ է առաջացել այդ պարտքը, մինչդեռ այդ հանգամանքը կարող էր պարզ լոյս սփռել մի քանի գործիչների: արարելով վրա: Եւ իսկպակ ինչպէս չէր գործանալ: Այժմեան կառավարիչ պ. Սարումեան, որ ստանում է ուժով 600 րուբլի, հաւաքել է 3696 ր. արդիւնք մի տարում. մինչդեռ միւսները, որոնք ստանում էին հազարներ, որրերի և այրիների գանձանակի ծախսելուն պատճառ են դաւել:

Կօնսիտօրիան վկայում է, որ պ. Սարումեանի բերած արդիւնքը ոչ մի տարի չէ եղած: Այլ հանգամանքը մեզ կարող է միայն ուրախացնել, որովհետև նա հաստատում է, որ պ. Սարումեանի պէս համեստ շինականները ասելի լաւ գործ են կատարում, քան շատ պարծենկոտ մեծամիտ աղաներ: Բայց մի և նոյն ժամանակ հարցնում ենք. ինչու է պ. Սարումեանի այդ գուժարը— 3696 րուբլի—համարվում անօրինակ, մինչև այժմ չը տեսնված. 1893 թ. հակառակ մի առանձին պատահութիւն չէ ներկայացնում բերքերի անտառութեան կողմից: Ինքը, պ. Սարումեան, անցեալ տմառը ստում էր մեզ, որ գեռ շատ կարելի է հաւաքել, եթէ չը լինեն արգելափակ հանգամանք:

այս օրերս մտնում է սինօղ վանքի վանաձօր մի վկայականը, որի մէջ ասված է թէ՛ յիշեալ տիրացուն, քառասուն օր մնալով վանքում՝ ուսել է քահանայապատշաճ բոլոր գիտելիքը: և այդ վկայականն հիման վրա էլ կօնսիտօրիան կրկնում է իր միջնորդութիւնը ձեռնադրութեան համար: Բայց մի և նմանակ է այն տխուր հոչակը, որ ստացաւ մի քանի տարի առաջ Նրեանում իր բացված ընծայարանը, որտեղ գիւղական տգէտ և սոպո տիրացուներ մի քանի ամիս քարչ գալով՝ արձակվում էին իրանց տները փրոնն ունենրին, իբրև պատրաստվածներ չի քահանայապատշաճ գիտելիք:

Այլ էլ ժողովուրդը հանգստացնելու միջոց էր: Այդպիսի միջոցներ են եղել և այն բացատրութիւնները, որ երբեմն երբեմն լավ են եկեղեցու բեմից: 1878 թ. մի եպիսկոպոս ձեռնադրելով հինգ քահանաներ, դարձաւ դէպի ժողովուրդը հետեւեալ խօսքերով. «Մերիկ ժողովուրդ. դուք հիմա կը մտածէք, թէ ինչպէս կարելի էր այս տգէտ գիւղացիներին քահանայ ձեռնադրել: Գիտե՞ք, որ Առաքեալներն էլ տգէտ, անուսում մարդիկ էին. բայց երբ Հոգւոյն սրբոյ շնորհքն իջաւ նրանց վրա՝ նրանք դարձան Աւետարանի քարոզիչներ և աշխարհի իմաստուններն յաղթող գիտուններ: Արովհետև սրանք էլ այսօր ձեռնադրութեան միջնորդութեամբ ստացան նոյն շնորհքը, սպա ուրեմն և կը լինին եկեղեցու արժանաւոր հովիւներ: Իսկ երեք-չորս տարի առաջ մի ուրիշ ձեռնադրող, ներկայացնելով ժողովրդին եթէ ձեռնադրվածներից ամեն մէկի մտաւոր և քարոյական թերութիւնները՝ ասել էր. «Ես անպարտ եմ այսպիսիներին ձեռնադրելու

ներ: Ուզում ենք ասել, որ այդ գուժարը կախարհական չէ, նա կարող է լինել մի հասարակ եկեղեցու, որը դեռ կարելի է մեծացնել, աւելացնել, եթէ մէջտեղ լինի կանօնաւոր հովիտութիւն, եւ անոր, աշխատութիւն: Եւ այն ժամանակ, հաստատեց մենք, թեմական դպրանոցը կունենայ կառուածներից խոշոր օժանդակութիւն: Կարուածների նախկին կառավարիչ Բ. Իւզրաշեանի զեղծութիւնների մասին երկու տարի է լուծւում ենք, որ հաւաքվում են տեղեկութիւններ. բայց երբ կը վերջնայ այդ գործը—Անցեալ տարի դատարանում գործ էր սկսվել մի ձիւռ մասին. այն ժամանակ ասում էին, թէ Բ. Իւզրաշեանի կառուածական կառավարչութեան վերաբերեալ նետաքերքը բացատրութիւն պէտք է լինի դատարանում: Բայց այդ գործը յանկարծ ոչնչացաւ:

Առհասարակ, Շուշու կօնսիտօրիայի լոյս հանած փաստերը շատ նետաքերքական են. նրանք պարզ ապացուցանում են, որ կայ խրատական փաստերով մի հարուստ անցեալ: Բայց մեզ մի բան անհասկանալի մնաց. կօնսիտօրիան յայտնում է, որ ինքը կառուածների կառավարութիւնը ստանձնել է 1889 թ. մայիս ամսից. մինչդեռ ամենքին յայտնի է, որ հանգուցեալ Մակար կաթողիկոսը կառուածները յանձնել է կօնսիտօրիային 1888-ի ամառը: 1888 թ. նոյնմեթից թեմական դպրոցը հոգաբարձութիւն չէ ունեցել մինչև 1889 թ. սեպտեմբերը: Այդ ժամանակաւ միջոցում վանքական կառուածների հաշիւները մտցրած են հոգաբարձութեան մատենանում և դպրոցը այդ կարճ միջոցին մօտ 1000 րուբլի վնաս է ունեցել կառուածների վրա, մինչդեռ նա արդարութեան տեսակետից չը պէտք է ներթարկվեր այդ տուգանքին, քանի որ այդ ժամանակ իրապէս նա կառուածների վրա որ և է իրաւունք չէ ունեցել: Կը խնդրէինք կօնսիտօրիայից այս հանգամանքը բացատրելու համար տնօրինութիւն անել:

Անցնելով մասնաւոր փաստերից ընդհանուրին, մենք կասենք, որ մեր ցանկութիւնը կառուածների արդիւնաւոր շահեցողութեան մասին լայն հիմքերի վրա է կանգնած: Նախապետական ձեռն ու կարող մի տեսեալութեան մէջ գոհացուցիչ լինել չէ կարող: Մշտական, առատ օգուտ ստանալու համար կարեւոր է խելացի անտեսաւարտութիւն, ինչպէս: Ղարաբաղի վանքական կառուածների համար պէտք է լինի ձեռնհաս և հակացող մի վարչութիւն, ներթարկված հոգեւոր իշխանութեան, որ կարողանայ շահագործել բնական հարստութիւնները, որ երկրի արդիւնաբերական ոյժերից ստեղծէ շահի աղբիւրներ: Ասածներս համար բաւական է և մի փաստ: Ղարաբաղի վանքական կառուածների մեծ հարստութիւնը զվատարապէս անտեսներն են: Անտառը Ղարաբաղի մէջ պէտք

համար. ժողովուրդն ընտրել է, հոգեւոր ժայռագոյն իշխանութիւնը շրամայել է ձեռնադրել. ես այդ շրամանը կատարեցի այսօր:

Ժողովուրդը դիտար էր այդ բոլորը և խորը գրութեան տալիք դարձ հետեւանք իր պաշտելի մայր եկեղեցու համար: Եւ նա 1885 թ. ին իր զգացած խիստ անբաւականութիւնն արտայայտելով ս. Էլմիմանի մէջ պատգամաւորների բերանով՝ կամեցաւ եկեղեցու վարչութեան ղեկը յանձնել այն անձին, որ դեռ շատ վաղ իր թերթում պախարակել էր անարժաններին ձեռնադրութիւնը և իր «Գրախոսի ընտանիքում» յորդոր և պատուէր էր կարգադրել նա ժողովրդին ընտրելու անսել. քանիտու և բարեբարոյ քահանայացուներ: Այդ նրան չափողվեց:

Թէ նրանից յետոյ ձեռնադրութիւնների գործն ինչ չափ ու ձեւ առաւ, արդէն պարզել է 1892 թ. փետրվարի «Արարատը»: Այդ յուսահատական գրութեան վերջ տուեց ս. Էլմիմանի սինօղն իր շրջաբերականով, որ ուղղվեց թեմական իշխանութիւններին 1892 թ. յունվարի 26-ին:

Երջն թիւ մայիսի 5-ին կատարվելու էր նոր կաթողիկոսական ընտրութիւն: Այս անգամ ազգն ասելի բուռն կերպով արտայայտեց իր կաւքը և ընտրեց այն մարդուն, որից ակնկալում էր իր եկեղեցու փառապանքի իրագործումն: Եւ անա այսօր, երբ նայրապետական գահի վրա բազմել է «Արթիւ վասպուրականի» խմբագիրը և «Գրախոսի ընտանիքի» հեղինակը, այսօր, երբ հասած պէտք է համարենք այն բազմալի ժամը, որ պէտք է իրագործված տեսնենք ազգի կողմից յայտացված հաստատեցրած և վեհապալի սրտին մօտիկ

է ունենայ թէ այժմ և թէ մօտիկ ապագայում մեծ նշանակութիւն, քանի որ օրի վրա անհետանում են անտառները, մասնաւորապէս նրանք, որոնք պատկանում են մասնաւոր կառուածատերերին: Պէտք է ապացուցանել, որ կանօնաւոր անտառապահութիւնը անհրաժեշտ է այդ մեծ հարստութիւնը ոչ միայն վտանգից պահպանելու, այլ և ասելի ճիւղացնելու համար:

Նախապետական կարգն ու ձեւը ներթադրում է մի անհատի կառավարութիւնը բաւականին անորոշ պարտաւորութիւններով. անհատը անում, գործում է, ինչպէս կարողանում է և հասկանում. և նրա արժեւորութեան չափից է կախված շահաւէտութեան աստիճանը:

Մենք այդպիսի կարգից չենք կարող բարիք սպասել:

Թիֆլիս. 1890

Ներհին ԼՈՒՐՆԵՐ

Մեզ հաղորդում են, որ Ղարաբաղի թեմում ներկայումս մեծ թւով քահանաներ են ձեռնադրվում գիւղերի համար,—բոլորն էլ տգէտ, անուսում, առանց որ և է պատրաստութեան:

Կ. Պոլսից թէ յայտնի գործակալութեանը հեռագրում են, որ Ալեքեան պատրիարքը շրթաբարկան տուեց իր պաշտօնից, յայտնելով թէ պատրիարքութիւնը իր համար մի ծանր բեռ է, որ այլ ևս տանել չէ կարող:

Լուծւում ենք, որ հանգուցեալ գեներալ Էրնստի փոխարէն, Թիֆլիսի արքեպիսկոպոս թատրոնների դիրեկտոր է նշանակվում Մ. Պ. Գակկէլ:

Մեզ հաղորդում են, որ այս օրերս Էլմիմանում լոյս տեսած կաթողիկոսական կօնգրալը գրված է աշխարհաբար լեզուով: Արքան մեզ յայտնի է, դա առաջին օրինակն է, որ կաթողիկոսական կօնգրալը գրվում է ոչ թէ գրաբար, այլ աշխարհաբար լեզուով, և մեզ մնում է միայն շնորհաւորել այդ համակրելի նորութիւնը:

Բազումքանակ տիկին Նիխարէթ Սարգսեան պատուիրել է Լոնդոնում մի նոր շոգեմաւ յատկացնելով այդ շոգեմաւին «Գրեկոր Արժուրի» անունը: Այդ շոգեմաւը, ինչպէս մեզ հաղորդում են, կը սկսի երթեկել կասպից ծովի վրա առաջիկայ մայիսի 1-ից:

Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգից պ. Գասպար Եղորեան հեռագրով փոխադրել է կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին 773 րուբլի, որ գոյացել է այնտեղ կենսական մեծ խնդիրն առանց որ և է գօժաւորութեան, յանկարծ «Արարատի» էլիւրում երեւում է Տ. Արշէն երեցի քարոզը, որ կարծես թէ նշգրտեալները մերժել, եկեղեցուց հեռացնել, քանի որ ընտրողը ժողովուրդն է: Ինչ անի հոգեւոր իշխանութիւնը, կըր ժողովուրդը կըր թախանձէ, կը պահանջէ, համախոսական ժողովներ կը կազմէ, հարկաւոր ստորագրութիւններ թափում են խնդրագրին վրա, վաւերական կնքով էլ գրոշմելով.—ճիշդ այն մտքով, ինչ որ յայտնեց մի եպիսկոպոս իր քարոզի մէջ, որպէս տեսանք փոքր ինչ վերջ:

Սակայն այդ խօսքերը, մի եպիսկոպոսի բերանից են լսվել թէ մի երեցի, բարեբաղդաւոր շատ թոյլ, շատ անգոր են արդարացնելու հոգեւոր վարչութիւնը, եթէ վերջնա իրան ննչ ընկած կը համարի թախանձանքների հանդէպ, և կոչված լինելով եկեղեցու իսկական շահերը պաշտպանելու՝ կը զիջանի նրանց հակառակ դաւ:

Մենք շատ լաւ ենք ճանաչում նա ժողովրդին, քաղաքացուց սկսած մինչև գիւղացին. գիտենք նրա թէ գովելի և թէ պախարակելի կողմերը. և երբեք մեր խիղճը չի ների մեզ նրան մեղադրելով արդարացնել մեր թաւութիւնը և պարտաւնեցողութիւնը: Հայ գիւղացի ժողովրդին ներկայումս դուք այնքան էլ տգէտ մի կարծէք, որ նա անընդունակ լինի ըմբռնելու ձեռ անկեղծ խօսքի նշանակութիւնը: Փորձեցէք մի կողմից մանր մէջ մնալ և միւս կողմից հասկացնել բացատրել նրան, թէ այս կամ այն խնդրում նա սխալում է, կամ ինչ որ թախանձում, պահանս

տուած երեկոյից, ի նպատակ Երևանի նահանգի սովետականներ:

Պարսից Շահի ճանապարհորդութիւնը դէպի Մարտի, Պետերբուրգի լրագիրները խօսքերով թափառանդի հիւանդութեան պատճառով կը յետաձգվի մինչև նրա առողջանալը:

Կ. Պոլսի հայոց լրագիրները հաղորդում են, որ էջմիածնում շուտով պէտք է ձևանարկեն Աստուածաշնչի տպագրութեան, թէ՛ գրաբար և թէ՛ նոյն խոսքի արաբագրութեան լեզուով: Տարաբար հարցարար այդ լուրը ճիշդ չէ: Բայց միանգամայն ցանկալի է, ի հարկէ, որ վերջապէս էջմիածինը կատարէր իր այդ ուղղակի պարտաւորութիւնը, տպագրելով և Գիրքը ոչ թէ միայն գրաբար, այլ և արաբագրութեամբ, որի կարգը վաղուց զգացվում է:

Յօգուտ Գրքերի Արժեքները արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք: 1) Ռիֆիսից, Մկրտիչ Մէլիք-Մարտիկեանի միջոցով, 3 ռ. 70 կ. (մնացորդ հայ զարգացների կողմից Արժեքները զարգացի վրա դրած պատկեր գումարից): 2) Շուշուց, Ստեփան Իւզբաշեանից 3 ռ. 3) Շուշուց, ինձամայ Ռուբէն Իւզբաշեանից 1 ռուբլի: 4) Աստրախանից, Շապիր Կուրբանից 10 ռուբլի: 5) Իրզէրից, Բագարատ Մատթէոսեանի միջոցով, 36 ռ. 50 կ. նանդանուկաձ հետեանալ անձինքներէ: Բ. Արտագնանց 4 ռ., Ռ. Օճանդանանց 3 ռ., Ռ. Մատթէոսեանց 3 ռ., Ն. Ներսիսեանց 2 ռ., Թ. Ներսիսեանց 1 ռ. 10 ռ., Ե. Ղարաբանց 2 ռ., Ա. Մարտիրոս Նիսանեանց 1 ռ. 50 կ., Տ. Սևազեանց 1 ռ., Խ. Արքայաձեանց 1 ռ., Թ. Աւագեանց 1 ռ., Ա. Շաւարշեանց 1 ռ., Խ. Տէր-Գրիգորեանց 1 ռ., Ա. Նիկողայոսեանց 1 ռ., Յ. Բարախանց 1 ռ., Ս. Ք. Տէր-Մանուկեանց 1 ռ., Ս. Աւագեանց 1 ռ., Լ. Տէր-Յարութիւնեանց 1 ռ., Ն. Նարաբանց 1 ռ., Թ. Նարաբանց 1 ռ., Պ. Արքայաձեանց 1 ռ., Ս. Սուսանեանց 1 ռ., Թիկին Զ. Սուսանեանց 1 ռ., Թիկին Մ. Ղարաբանց 1 ռ., Զ. Մանուկեանց 1 ռ., Վ. Բարախանց 1 ռ., Ս. Մէլիք-Ստեփաննոսեանց 1 ռուբլի: Ուրեմն նախկին 3044 ռուբլի 8 կ. հետ այժմ ունենք 3098 ռ. 28 կոպէկ:

Չնք կարող մասնանի չանել հետեանալ անարդար դէպքի վրա.— Ներսիսեան զարդի ուսուցիչ Սարգիս քահանայ Բէգ-Նազարեան, ծանր հիւանդութեան պատճառով, անկարող է յաճախել դասերին: Ուսումնարանի վարչութիւնը, վճակելով նրա դասերը բաժանել ուրիշ ուսուցիչներին մէջ, որ

ջում է, մնասկար է իրան և նա պատրաստ է հլու հպատակութեամբ լսել իր եկեղեցականին: Նոյն է նա և արժանաւոր քահանայ ունենալու ինչպէս. ճիշդ է, մէջտեղում կը մնան մի քանի թախանձողներ. բայց դրանք գիւղական ժողովրդի յամառութեան ներկայացուցիչներ չեն, այլ առաջարկված տիրացուի հայր ու եղբայր, քաւոր սանահայր, աներ ու խնամի, կամ մահուց չուրայ ստացող լեզուանի գիւղացի, որ վարձվել եկել է և ամենայն օր զինեամբ տիրացուի հաշուով ուսում և խմում է միայն փաստարաններում: Եւ հաւատացած կացէք, որ այդ մարդիկն են, որոնք գիւղական համայնական թերթերն են կազմում «հարիւրաւոր ստորագրութիւններ թափում են, կնքով էլ դրոշմելով». բայց մի կարծեք, կամ կարծե՞ք տաք, թէ զանազան ճանապարհներով ձեռք բերված այդ թերթերն իսկապէս բուն ժողովրդի կամքի և ցանկութեան արտայայտութիւններն են, այլ ճշու՛ւմն գործող մի քանի հարստահարիչների կամ շահախնդիրների պատրաստածներ, ոչ թէ համագումար ժողովներում, այլ տե՛ս տուն մանածելով, և շատ անգամ էլ անգրագէտ գիւղացու անունը առանց նրա խնդրելու և գիտութեան դրած: Այն տալիս ենք ձեզ այդպիսի հարցաւոր թերթերից մէկի օրինակը: 1889 թ. Ռուս Նոր-Բայազետի Չարչալու գիւղի ժողովրդի անունով մատուցվում է Երևանի կոմսիտարիային բազմաստորագիր մի խնդիր, իրանց համար երկրորդ քահանայ ձեռնարկու մի տիրացուի խնդրի մէջն էլ, ի հարկէ, վկայված է քահանայացուի «բարեբարութեան» մասին, այնպէս, ինչպէս Արշէն երէցը լսել է մի քանի գիւղացիների վկայութիւնն իրանց բերած տիրացուի լաւ վարք ու բարքի մասին*): Տիրացուն ձեռնադրվում է: Հազիւ երեք տարի անցած՝ նախկին քահանայացուի բարեբարութեան վկայող ժողովուրդը բողբոքում է սիրողին քահանայացուի անբարոյականութեան դէմ, յանցանքների թոււմ դնելով և այնպիսիներ, որոնց մէջ քահանան ճանաչված է եղել շատ վաճառորդական ինքնուրույն մատուցանելու համար ժողովուրդը համախոսական վճով ընտրում է երկու հաւատարմատար: Համախոսական է, չէ՛ հասարակութեան միաձայն վճով անունով են խօսելու այդ մարդիկ չէ՛, թուրք տանուտէրն էլ թուրքերէն ստորագրել և «վաւերական կնքով» էլ դրոշմել է: Չէ՛. բայց տեսէք բանն ինչու՛ն է: Բոլոր գիւղացիների անունները վճան վերագրելուների անգրագիտութեան, ստորագրել են երեք մարդիկ. բայց մէկի՛ 25 անգրագէտների անունների կէտը ուրիշ ձեռքի գրով է գրած. յետոյ, մի քանի գիւղացիների անունագրանունները գրված են երկու տեղ, առանձին առանձին երեքների վրա. մի ուրիշը չորս տեղ և այլն: Ահա ձեզ հարիւրաւոր թափած ստորագրութիւնները:

*) Այդպիսի վկայութեամբ երկու երեք ամիս առաջ խաթմուարիս գիւղում պիտի ձեռնադրվէր մի տիրացու, և հարկ եղաւ սուրհանդակ ուղարկել գիւղերը, որ ձեռնադրութիւնը չը կատարվի:

ինքն ըստ ինքեան, ի հարկէ, գովելի վճիւ է,— որչա՛ր է գրկել քահանայ Բէգ-Նազարեանին նրա ուժիկից: Գա անարդարութիւն է: Ուսուցիչը հիւանդանալով, բարոյական իրաւունք ունի դէժերելու, եթէ չտեսնէ չորս ամիս, ինչպէս ընդունված է, ուժիկ ստանալու: Եւ ահա մի մարդ, որ անկի քան քան տարի ծառայել է հայոց զբարոյներին, որ շատ տարի է արդէն Ներսիսեան զարդուց և ծառայում, զրկվում է նիւթական օգնութիւնից՝ հէնց որ տկարանում է: Գան է արդարութիւնը: Գան է այն օգնութիւնը, որ մատուցանում է իր ուսուցիչներին հայոց ամենահարուստ զարդը:

Հարց է յարուցված պետական 10 ռուբլիանոց թղթադրամները փոխարինել նոր ձևի թղթադրամներով:

«Московскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է հետեանալ տեղեկութիւնները, թէ աշխան ամիսներում, աշխատանքների զարգացում պատճառով, Ռիբբիլայից թափվել է կարսի շըրջանը թշուառների մի ամբողջ մասսա, որը ապաստանել է իր համացեղակիցներին մօտ: Վերոյիշեալ գաղթականներն անցել են Ռուսաստանի սահմանները առանց պատշաճաւոր թոյլտուութեան և անցաթղթերի: Տեղական կառավարութիւնը, ի նկատի առնելով սաստիկ ձիւնը և սրտերը, վճուել է չը վերադարձնել նրանց մինչև ամառվան ամիսները, քանի որ մի այդպիսի կարգադրութիւն համահաւասար կը լինէր մահվան դատարարութեան: Սակայն երբ ամառը վրա հասնի, նրանք, որոնք մինչև այդ օրը ձեռք բերած չեն լինի հարկաւոր անցաթղթեր, կառավարութիւնը նրանց անպայման կը վերադարձնի իրանց տեղերը՝ Ռիբբիլայի Գաղթականների թիւը անցնում է 5000-ից:

Յօգուտ կարսի և Երևանի նահանգի սովետաների ստացանք: 1) Բագուից, Աստուածատուր Վաչանի միջոցով, 109 ռուբլի (մնացորդ կաթողիկոսական պատգամաւորութեան համար հաւաքած անպարտութեան: Սակայն երբ ամառը վրա հասնի, նրանք, որոնք մինչև այդ օրը ձեռք բերած չեն լինի հարկաւոր անցաթղթեր, կառավարութիւնը նրանց անպայման կը վերադարձնի իրանց տեղերը՝ Ռիբբիլայի Գաղթականների թիւը անցնում է 5000-ից: 2) Շուշուց, ինձամայ Ռուբէն Իւզբաշեանից 1 ռուբլի: 3) Շուշուց, Ստեփան Իւզբաշեանից 3 ռուբլի: 4) Տազարոզից, Ս. և Ի. Արքայաձեանքների աւետարական տանից 35 ռուբլի, որից 10 ռուբլի նուրբել է Լուսինէն Գիւնչկեանց: Ուրեմն նախկին 119 ռուբլու հետ այժմ ունենք 267 ռուբլի: Այսօր, ապրիլի 8-ին, յանձնեցինք Բարեգործական ընկերութեան խորհրդին 109 ռուբլի՝ կաղզուանի ձրի ճաշարանի համար: Մեզ մօտ մնում 158 ռ.: Ուրեմն մինչև այժմ մենք

այն *): Տիրացուն ձեռնադրվում է: Հազիւ երեք տարի անցած՝ նախկին քահանայացուի բարեբարութեան վկայող ժողովուրդը բողբոքում է սիրողին քահանայացուի անբարոյականութեան դէմ, յանցանքների թոււմ դնելով և այնպիսիներ, որոնց մէջ քահանան ճանաչված է եղել շատ վաճառորդական ինքնուրույն մատուցանելու համար ժողովուրդը համախոսական վճով ընտրում է երկու հաւատարմատար: Համախոսական է, չէ՛ հասարակութեան միաձայն վճով անունով են խօսելու այդ մարդիկ չէ՛, թուրք տանուտէրն էլ թուրքերէն ստորագրել և «վաւերական կնքով» էլ դրոշմել է: Չէ՛. բայց տեսէք բանն ինչու՛ն է: Բոլոր գիւղացիների անունները վճան վերագրելուների անգրագիտութեան, ստորագրել են երեք մարդիկ. բայց մէկի՛ 25 անգրագէտների անունների կէտը ուրիշ ձեռքի գրով է գրած. յետոյ, մի քանի գիւղացիների անունագրանունները գրված են երկու տեղ, առանձին առանձին երեքների վրա. մի ուրիշը չորս տեղ և այլն: Ահա ձեզ հարիւրաւոր թափած ստորագրութիւնները:

Սոյն տարվայ «Մշակի» 3-րդ համարում կարդացինք մի այսպիսի լուր, Աստրախանից «Օրվայ հետաքրքրութիւնը մեղանում կազմում է առաջնորդական խնդիրը: Զգալով անաչառ, եւ անաղտ և անկաշառ առաջնորդի կարեւորութիւնը, հետաքրքրվում են նրանով, թէ ով կը նշանակվի մեր վիճակի կառավարիչ», ըստ որում ժողովրդի համար շահաւէտ խնդիրների կարգում

*) Այդպիսի վկայութեամբ երկու երեք ամիս առաջ խաթմուարիս գիւղում պիտի ձեռնադրվէր մի տիրացու, և հարկ եղաւ սուրհանդակ ուղարկել գիւղերը, որ ձեռնադրութիւնը չը կատարվի:

տացել ենք 1589 ռ. և ուղարկել ենք 1431 ռուբլի:

Բիրտանական բիրտական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, ձեռնարկել է յատուկ կովկասի և Հարավային Ռուսաստանի համար Աստուածաշնչի թարգմանութեանը կովկասեան բարբառներով՝ աղբրէջանի, կուրիկի, կազգարեան և հայերի արարատեան բարբառով:

Պետական կարուածների միւնիստրութեան հաւաքած վերջին տեղեկութիւնների համեմատ, Ռուսաստանում մօտ 170,000 ղէսխատին տարածութեամբ խաղողի վազեր կան, որոնք տարեկան տալիս են մօտ 20 միլիոն վեղրօ գինի: Այդ թիւից կովկասում 100,000 ղէսխատին տարածութեամբ վազեր կան, որոնցից 11 միլիոն վեղրօ գինի է ստացվում:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ վերջին ժամանակներս մոյօրօսիական նահանգներում արտասահմանեան բազմաթիւ ագէստներ են երևացել, որոնք առնում են մանանիխ սերմը և իւզը՝ շտախուրկեան շուկաների համար, ուր մանանիխը առաւելակեան գնով է ծախվում: Ի նկատի ունենալով այդ, մոյօրօսիական հողատէտերը մտադրութիւն ունեն ընդարձակել մանանիխի ցանքների տարածութիւնը:

Այս օրերս Կ. Պոլսում լոյս է տեսել բանաստեղծ Գուրեանի կենսագրութիւնը: Ինչպէս յայտարարում է Կ. Պոլսի հայոց գրականութեան մէջ Գուրեան տաղանդաւոր բանաստեղծի հուշակ ունի, որը, տարաբարդաբար, շատ երիտասարդ հասակում, հազիւ քան տարեկան դարձած՝ վախճանվեց: Բացի ոտանաւորներից, Գուրեան թողել է և մի քանի ողբերգութիւններ:

Մեզ հաղորդում են, որ շուտով մեր քաղաքի թատրոնասէր տիկիններից, օրիորդներից և տղամարդկանցից բաղկացած մի խումբ ներկայացում կը տայ յօգուտ սովետաների: Խաղալու են Սուսանուկեանցի պիեսներից մէկն ու մէկը: Տիկիններից և օրիորդներից մասնակցում են՝ տիկին Եւանդուլեան, իշխանուհի օր. Ս. Արղութեան, օր. Փոնդուկեան և ուրիշները:

Երէկ, ապրիլի 8-ին, Էրուսթօկի զահիճում տեղի ունեցաւ բժշկագետ Վ. Արժեքու զաստիսուութիւնը Էրաստուսեան հիպոտիզի մասին: Այսօր, չարաթ օր, նոյն զահիճում տեղի կունենայ զաստիսուութեան երկրորդ մասը, Էրաստուսեան հիպոտիզի մասին: Գաստիսուութիւններից դոյա-

կայ և Էրթված հոգևորականների խնդրոյ, այն ինչ Էրթեալ քահանաները սունկի պէս բուսել են նրանում վերջին տարիները: Աստրախանի թեմի հայ ժողովուրդը բաղադրեալում է ընտելում և մատուցապէս զարգացած է. բայց այդ նոյն զարգացած ժողովուրդը այնքան տկարացել, կորցրել է իր իրաւունքը և ձայնի նշանակութիւնը, որ չը նայած՝ թէ քահանայի ընտրողն ինքն է, դարձաւ մի անաչառ և անկաշառ առաջնորդ պէտք է լինի, որ նրանց տայ կրթված հոգևորականներ: Երբ աստրախանցին այս տեղն է հասել, գիւղացու թախանձանքն է, որ հարկադրում է տգէտներ ձեռնարկել:

Վերջապէս՝ գիւղական ժողովրդի համախոսական թերթերը, եթէ մի րոպէ ենթադրենք թէ կանոնաւոր են կազմված, ինչ պարտաւորիչ նշանակութիւն ունեն հոգևոր իշխանութեան համար. նրանք ընտրողների կամքի արտայայտութիւններն են, իսկ այդ կամքի օրինաւորութիւնը և ապօրինութիւնը քննելը և հաւանութիւն կամ մերժումն տալը իշխանութեան իրաւունքն է. այնպէս—չը կայ իշխանութիւն—Արշէն երէցը շարունակելով իր բարողը՝ ասում է, թէ միանգամ պատահաբար գտնվելով վեհարանում այն ժամանակ, երբ գիւղացիները բերել էին մի տիրացու և վեհախառ կաթողիկոսը տիրացուին Աւետարան կարդալ տալով և կովկասը տեսնելով՝ զանում է դէպի գիւղացիները և ասում, թէ՛ ձեր տիրացուն տգէտ է. թէ՛ քահանան, ժողովրդի հովիւը, նրա առաջնորդը, նրա մտքի ճրագն և աղը լինելու բարձր կուսումն ունենալով պէտք է ուսնալ լինի: Բայց գիւղացիք պատասխանում են. թէ՛ «մեր տիրացուն գիւղի մէջ ծնած ու մեծացած լինելով՝ իրեն վարք ու բարք մեզի յայտ-

ցած արդիւնքը պէտք է յատկացվի բարեգործական նպատակին:

Մեզ ուղարկված է տպագրուած հետեանալը. «Լրագիրներում յայտարարվեց, որ Արթուրով Յովհաննիսեանի կազմած «Ռուս-Հայերէն» բառարանի երկրորդ հատորն արդէն լոյս է տեսել և նոյն իսկ վաճառվում է: Յանկայի էր իմանալ, թէ բաժանորդ գրովորները, որոնք առաջին հատորը վաղուց են ստացել, երբ և ինչ ձևանագրով պիտի կարողանան ստանալ երկրորդ հատորը»:

ԱԵԱԼՅԽԱՅԻՅ մեզ գրում են. «Մարտի 31-ին, Երեկոյեան ժամը 4-ին, այստեղ հասաւ մեր վիճակի նոր յաջորդ Անանիա վարդապետը, որին դիմաւորելու համար ահագին բազմութիւն էր խնայել եկեղեցու բակում ու փողոցում: Հայր սուրբին, եկեղեցու պարույր գրան ժօտ, դիմաւորեց հոգեւորականութիւնը զբեստաւորված և ապա «Ռեբախ իբ» շարակնով հոգեւորականների դասը մտաւ եկեղեցի: Հայր սուրբը մի քանի խօսքով ողջունեց ամենին և օրհնեց: Անանիա վարդապետը յաջորդ նշանակվելով բաղաբար հոգևոր կառավարութեան գործերը անշուշտ կարգի կընկնեն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Երօպական լրագիրներին հեռագրում են, որ նորերս ընդհարում տեղի ունեցաւ անդիական և տեղական զօրքերի մէջ: Թէ ինչ էր այդ ընդհարման պատճառը, դեռ ևս յայտնի չէ, բայց երեւում է, որ լուրջ բնաւորութիւն է ունեցել ընդհարումը, որ դրա մասին հարկաւոր են համարել հեռագրել:

Եգիպտական երիտասարդ խնդիրը, իր գահը բարձրանալու օրից, հասկացաւ թէ որպիսի ամօթալի պայմանների մէջ է գտնվում Եգիպտոսը, կախումն ունենալով Անգլիայից և հլու հպատակ նրա ցանկութիւններին և հրամաններին: Խնդիրը փորձ փորձեց ինքնուրոյնութիւն ցոյց տալ և զիմաղրել Անգլիային, բայց հէնց առաջին քայլափոխում Անգլիան, իր ներկայացուցչի միջոցով, այնպիսի սանձ դրեց երիտասարդ խնդիրի վրա, որ նա ստիպվեց ներդառնալ ինչպէս և խոտաացաւ քաւել իր մեղքերը:

Եգիպտոսում այժմ, անգլիացիների շնորհով, տեղի ունի միւնիստրութեան ձգնաձգում: Անգլիացիները դժգոհ են եգիպտական այժմեան առաջին միւնիստր Ռիպի-փալայից և նրա միւնիստրութիւնից, այն ինչ յայտնի է, որ այդ միւնիստրու-

նի է. մի լաւութիւն ևս մեզ համար այս է, որ մեզ համար շատ շահաւէտ է, երբ քահանան մեր գիւղացի լինի, նա հողաբաժին կունենայ գիւղում մէջ. այլ ևս չենք պարտաւորիչ նոր բաժին տալ: Թէ՛ մենք աղքատ չեաւոր գիւղացի ենք. շատ անգամ պատահում է, որ մենք քահանայի իրաւունք շուտ չենք վճարել և քահանան համբերում է. թէ՛ ուսում առած մէկը, թէ՛ և նոյնպէս գիւղացի և գիւղից տրեխով գնացած՝ գիւղացիների հրաւերին, որ գայ իրանց քահանայ լինի, կը պատասխանէ. ես եթէ քահանայ լինիմ, կերթամ քաղաքացուց կը լինիմ, (հետաքրքրել էր իմանալ, թէ՛ բարեկ. Արշէն երէցը լսած է արդե՞ր, որ մի գիւղի ժողովուրդը ընտրել է ձեռնարանից զուրս եկած երկու երիտասարդների և սրանք յօժարութեամբ յանձն են առել նրանց համար քահանայանալ), որ ուսումն և կրթութիւն ունին և իմ պատիւս ճանաչում են. թէ՛ գիւղացի կոպիտ խնդրի փիլիսոփայութեամբ՝ մեզ այնպէս կը թուի, որ տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր. և բնական կերպով չեն յարմար իրար»:

Այստեղ արդէն կանգ ենք առնում, որովհետեւ պատասխանելու պէտք չենք տեսնում. մենք միայն ստորագծեցինք վերջին տողերը, որ ընթերցողի խորին ուղարկութիւնը չը վերպեն նրանք: «Արարատի» էջերում փայտող այդ տողերը ապագայ պատմաբանի համար հատորներ կազմելու նիւթ տուող գանձ են:

Արիստակէս Եպիսկոպոս Սեղազեան

Թիւրք կարգիւն է Անգլիայի խորհրդով և ցանկութեամբ Ռիպո-փաշային, որին առաջ այնքան զովում էին, այժմ համարում են տղէտ և անընդունակ երկարակամ գործերը վարելու: Խեղիվը չէ կամենում ընդունել Ռիպո-փաշայի հրատարականքը: Այդ առիթով կայրիկին «Times» լրագրին գրում են հետևեալը:

«Թեպէս մինիստրութեան փոփոխութեան վերաբերմամբ տարածված լուրերը առժամանակ զարգացին, սակայն ամենքը հաւատացած են, որ չուտով պէտք է սեղի ունենայ այդ փոփոխութիւնը: Ընդամենը պատճառը Մանուէլ-փաշան է, որ որպէս ներքին գործերի մինիստրի օգնական, զգգունութիւն է յարուցել իր ղէմ տեղացիների և եւրոպացիների մէջ: Այդ պատճառով էլ, որպէս կարծում են, հրատարական կը տայ և Ռիպո-փաշան: Խեղիվը համար շատ զրծուար է գաննել Ռիպո-փաշայի յարգըն, որովհետև շատ սակաւաթիւ է եղիպոսի պետական մարդկանց թիւը և բայի գրանից խեղիվը ստիպված է համակերպվիլ Անգլիայի ցանկութիւններին: Խոստում են Արդէլ-Կազէրի, Մուստաֆա-Ֆէմիի և Նուբար-փաշայի մասին: Վերջինը իր հասակով փորձառութեամբ և անձնական տակտով կարող է բարերար ազդեցութիւն ունենայ խեղիվի վրա, սակայն խեղիվը, որպէս կարծում են, գերադասում է աւելի երիտասարդ մարդկանց:»

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՌԻՆԻ

Մարդիկից հեռագրում Հաւասի գործակալութեանը մարտի 31-ին (այսինքն 22-ին) հետևեալը: «Վալենցիայում ժողովրդական խմբերը յարձակում գործեցին Հուսոմ ուղեորով ուխտաւորների վրա, երբ նրանք նստեցին էին նստում: Ոստիկանութիւնը ցրվեց յարձակողներին:»

Ֆրանսիական լրագիրները հարգողում են, որ սուլթանը հրամայեց Պետերբուրգի ղեկաւան Հուսոմ-փաշային՝ բանակցութիւններ սկսել ուսուկաւարութեան հետ՝ առեւտրական դաշնագիր կապելու համար Թիւրքիայի և Ռուսաստանի մէջ:

Ռէյտերի գործակալութեանը հեռագրում են այսինքն 2-ին հետևեալը: «Ռիպո-փաշայի մինիստրութիւնը այսօր հրատարական տուեց, որովհետև այլ ևս խեղիվի վստահութիւնը չէ վայելում: Անգլիական լրագիր կրածը կրածներին հետ խորհրդակցելուց յետոյ, խեղիվը նոր մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնեց հայազգի Նուբար-փաշային:»

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵՐԼԻՆ, 6 ապրիլի: Վիլհելմ կայսրը ճանապարհ ընկաւ այսօր կարսրուէից ղեպի կորսուրգ:

ԿՈՐԻՈՒԳ, 6 ապրիլի: Այսօր ժամանեցին Ֆրիդրիխ կայսրի այրին, պրուսական Հէնրիխ պրինցը և մէյնինգէնեան թագաժառանգը իրանց տունակներին հետ:

ԲՈՒՄԱՊԵՏ, 6 ապրիլի: Ռուսարական պատգամ տրեքի ժողովը ընդունեց բաղադրական ամուսնութեան վերաբերեալ օրինագիծը երկրորդ ընթացակարգով: Այսօր օրինագիծը ներկայացվեց մանուսկրների ժողովի քննութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 ապրիլի: Մտադրութիւն կայ դատաստանական կանոնադրութիւնները մտցնել Ատարախանի նահանգում երկր հոկտեմբերի 1-ից:

ՎՈՒԿՈՎ, 7 ապրիլի: Ստիպողական օրէնքը վերացնելու վերաբերեալ ըլլը իրանգիայի համար համայնքների ժողովի կողմից ընդունվեց երկրորդ ընթացակարգով ժամանակ:

ԿՈՐԻՈՒԳ, 7 ապրիլի: Վիլհելմ կայսրին ղեկաւորեցին կայսրանուս կորուրգեն դուքսը, Թագաժառանգ Յեսարելիլը, Վլադիմիր, Սերգի և Պաւլէ Ալեքսանդրովիչ Մեծ Իլլյանները: Ռուսի պրինցը և բոլոր պրինցները բազմաթիւ զինուորական սվտայով, զանգահարութեամբ և թիւղանօձգութեամբ: կորսեց ղեկեց ղեպի ամբողջ, ուր երեկոյան ընտանեկան ճաշ կար, իսկ յետոյ սերենաղ և ջանաւարութիւն:

ԿՈՐԻՈՒԳ, 8 ապրիլի: Այսօր պարտական եկեղեցում, Բարձրագոյն հիւրերի ներկայութեամբ սեղի ունեցաւ Հէստին մեծ դքսի պատկազրութիւնը Վիկտորիա-Սելիա իլլանուհու հետ, պատաստում հանդիսուար ճաշ կար: Երիտասարդ զոյգը ճանապարհ ընկաւ կորսուրգի:

ՎԻԵՆՆԱ, 8 ապրիլի: Ստացված է աւստրուսական առեւտրական դաշնագրի նախագիծը, զաշնագրի վերջնական խմբագրութիւնը մէկ շաբաթում կը վերջանայ:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԱՆՔԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻԻ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԶԳՈՒՇԱՅԷԲ ԿԵՂՆՈՒՄՆԵՐԻՑ ԵՒ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս Ա Պ Օ Ն

պ ռ օ լ ի զ օ Ր

Ա. Մ. ՕՍՏՐՈՒՄՕՎԻ

Կատարելու պէտք ունի շահուհու է գըր-խի թ ե ի բ, նպատակ է մարդի կանոնաւորումը և իսկապէս դադարեցում է ներքին թափիլը:

Իւրաքանչիւր կտորի գինը 30 կոպ: Երկու կտորանոցի գինը 50 կոպ:

Կեղծումները խուսափելու համար պահանջեց իսկական սպան, որը արկի վրա կառավարութիւնը հաստատված մարկա ունի № 3374:

Մտայում է ամեն տեղ: Պահեստ, Մոսկու, Լեալին փող, սեփական տուն: (№ 23) (չ.) 5-20

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Տ Է Ր-Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Ի
Ընդունում է երթիկ, կիսաթիւղակաւոր և թոշակաւոր աշակերտներ: Պատրաստում է կրտսիական գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կաղաների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար:
Թիֆլիս, Գանձակայա փողոց, № 11, սեփական տուն: (Եր. և շ.) 5-25 (№ 35)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է որ այս տարվայ ապրիլի 12-ին, յերեկվայ 12 ժամին, նշանակել է աճուրդ մինչև 450 սաժէն փայտ մատակարարելու համար քաղաքային հիմնարկութիւնների և զորքերի մի քանի մասերի և Թիֆլիս քաղաքում գտնված վարչութիւնների համար, 1895—1898 թ. ժամանակամիջոցով:
Փայտ մատակարարելու աճուրդը ընդունել ցանկացողները կարող են պայմանները տեսնել վարչութեան Գրասենեակում ամեն օր մինչև յերեկվայ 2 ժամը, բացի կիրակի և տոն օրերից: (№ 39) 2-3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ արանով յայտնում է հասարակութեան զիտութեանը, որ 1894 թ.ի ապրիլի 27-ին, յերեկվայ 12 ժամին, աճուրդ կը նշանակվի վարձով տալու ՊԱՐՄԸ կուր գետի վրա, Մուխրանկայա փողոցի և Սաղի մշ, 1895 թ.ի յունվարի 1-ից, 3 տարի ժամանակով: Պայմանները կարելի է տեսնել վարչութեան ղեկանատանը յերեկվայ 10 ժամից մինչև 12 ժամը: (№ 38) 3-6

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ա. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ղեղերի, մորթի ղեղեցիացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է կուկիայում, վարձով արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդիանի առաջին մասն. հիւանդանոցի տակ: (№ 67) 67-100 (Ե. շ.)

Ի Ե Ա Բ Ր Օ Ն Ֆ Օ Ն Բ Ր Ե Ն Ն Է Ր
Յանձն է առնում ՀԱՇԻՍԱՂԱՎԱՆ, ԳՐԱՆԵՆԱԿԻ և ԱՌԵՏԻՍԿԱՆ ՄԱՏՆԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ուսուցիչ, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով: ստուգում է զանազան առեւտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիւները և մատականները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատականները, ընդունում է առևտրական մատականների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը:
Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ձեռք ճեղք ԿՈՒՐՄԵՆԻ ԲՆԱՅՐԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՕՆԱՌՈՐ ՄԱՏՆԱՆՆԵՐ: Մատականներ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի: Հասցէն Էլիզաբետին-ՏԵՂԱՅ, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում:
Ուսուցանում է:
Հ Ա Շ Ի Ս Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ր Ա Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Վճար } Հաշուապահութեան ամբողջ կտորի համար (2-3 ամիս) 40 ՐՈՒԲԼԻ
} Արագագրութեան տեսական կտորի համար (2 ամիս) 50 ՐՈՒԲԼԻ
Պարապմունքների լինում են ամեն օր, երկու ժամակայ ընթացքում: Առաջագիտ պարապմունքների համար ՎԻՅԱՎԱՆՆԵՐ ղեալական ղալոցի ղերէկուրցից և ուրիշ անձերից: (№ 16) (չ) 8-100

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Թ Ի Ֆ Լ Ի Ո Ւ Ա Ռ Ե Ի Տ Ր Ս Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի
գ1-ն Փետրվարի 1894

Table with 3 columns: Description, Amount, and Total. It lists various financial items and their corresponding values in rubles and kopecks.